Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2026

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2026թ.) վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 5

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները 8

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում 7

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 15

ԱՄՓՈՓՈՒՄ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման ներկա փուլում գենդերային հավասարության ապահովումը հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը: Չնայած վերջին տասնամյակներում տարբեր երկրներում արձանագրված առաջընթացին, այնուամենայնիվ, կանանց և տղամարդկանց միջև հնարավորությունների, ռեսուրսների և որոշումների կայացման գործընթացներին մասնակցության անհավասարությունը շարունակում է պահպանվել: Այն դրսևորվում է կյանքի տարբեր ոլորտներում (տնտեսություն, կրթություն, առողջապահություն, քաղաքականություն և այլն)՝ սահմանափակելով հասարակության ներառական և կայուն զարգացումը:

Գենդերային անհավասարությունը ոչ միայն մարդու հիմնարար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման խնդիր է, այլև տնտեսական և սոցիալական արդյունավետության ապահովմանը խոչընդոտող կարևոր գործոն: Երբ հասարակության մի հատվածը լիարժեքորեն չի կարողանում իրացնել սեփական ներուժը, դրանից տուժում են ոչ միայն առանձին անհատները, այլև ամբողջ տնտեսությունը: Այդ պատճառով գենդերային հավասարության խթանումը միջազգային կազմակերպությունների, ազգային կառավարությունների և քաղաքացիական հասարակության կառույցների ուշադրության կենտրոնում գտնվող առաջնահերթ ուղղություններից է: Բազմաթիվ ուսումնասիրություններ փաստում են, որ գենդերային հավասարության բարձր մակարդակ ունեցող երկրները, որպես կանոն, առանձնանում են մարդկային կապիտալի ավելի արդյունավետ օգտագործմամբ, սոցիալական ավելի բարձր ներառականությամբ և զարգացման ավելի բարենպաստ ցուցանիշներով:

Նկատի ունենալով գենդերային անհավասարության հիմնախնդրի վերազգային բնույթը՝ պահանջվում են այնպիսի համընդհանուր ընդունելի մեթոդներ և գործիքակազմ, որոնք հնարավորություն կտան ոչ միայն գնահատել առանձին երկրներում առկա իրավիճակը, այլև հետևել ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններին և իրականացնել միջերկրային համեմատություններ: Այդպիսի մեթոդաբանությունը և գործիքակազմը հնարավորություն կտան բացահայտել ինչպես արձանագրված առաջընթացը, այնպես էլ այն ոլորտները, որտեղ դեռևս պահպանվում են էական անհավասարություններ: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն հեղինակավոր միջազգային կազմակերպությունների վերլուծությունները: Գենդերային հավասարության ոլորտում ամենահեղինակավոր միջազգային հետազոտություններից է Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum, այսուհետև՝ ՀՏՀ) կողմից 2006 թվականից ի վեր ամեն տարի հրապարակվող «Գենդերային անհավասարության համաշխարհային զեկույցը»

(Global Gender Gap Report): Զեկույցի առանցքում գտնվում է Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը (այսուհետև՝ ՀԳԱ ինդեքս կամ Ինդեքս), որով գնահատվում է տարբեր երկրներում կանանց և տղամարդկանց միջև առկա ճեղքվածքը՝ տնտեսական մասնակցության, կրթության, առողջության և քաղաքական ներկայացվածության ոլորտներում: Զեկույցը հնարավորություն է տալիս համապարփակ պատկերացում կազմել ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային և ազգային մակարդակներում արձանագրված միտումների վերաբերյալ: Ինդեքսի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն կենտրոնանում է ոչ թե երկրների զարգացման ընդհանուր մակարդակի, այլ կանանց և տղամարդկանց միջև առկա տարբերությունների գնահատման վրա: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս համեմատել տնտեսական և սոցիալական զարգացման տարբեր մակարդակով երկրները՝ բացահայտելով գենդերային հավասարության ապահովման գործում նրանց արձանագրած հաջողություններն ու առկա մարտահրավերները: Միաժամանակ, զեկույցի արդյունքները լայնորեն կիրառվում են քաղաքականության մշակման, ռազմավարական ծրագրերի նախապատրաստման և ոլորտային բարեփոխումների առաջնահերթությունների սահմանման գործընթացներում:

«Լույս» հիմնադրամը, կարևորելով ՀԳԱ ինդեքսի և դրա հիման վրա հրապարակվող ամենամյա զեկույցների տեղեկատվական և վերլուծական նշանակությունը, յուրաքանչյուր տարվա զեկույցի հրապարակումից հետո պատրաստում է դրա վերաբերյալ առանձին հաշվետվություն: Հաշվետվության առաջին բաժնում ներկայացվում են ՀԳԱ ինդեքսի բովանդակությունը, կառուցվածքը և հաշվարկման մեթոդաբանական հիմքերը: Այնուհետև ամփոփվում են համաշխարհային և տարածաշրջանային մակարդակներում արձանագրված հիմնական արդյունքներն ու միտումները: Հաջորդիվ վերլուծվում է Հայաստանին վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև իրականացվում են միջազգային և տարածաշրջանային համադրություններ: Հաշվետվությունն ավարտվում է դրա կարևոր արդյունքների ու եզրահանգումների ամփոփմամբ:

ՀՏՀ 2026 թվականի «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցը»[1] (այսուհետև՝ Զեկույց) հրապարակվել է օրերս: Զեկույցն ընդգրկում է 145 երկիր, որոնցից 97-ի համար ինդեքսն ամենամյա զեկույցների շարքի հրապարակումից ի վեր բոլոր տարիներին հաշվարկվել է:

Զեկույցում աշխարհը բաժանված է 8 տարածաշրջանային խմբերի (*«Եվրոպա», «Հյուսիսային Ամերիկա», «Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ», «Կենտրոնական Ասիա», «Ենթասահարական Աֆրիկա»,*

[1] Ամբողջական զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://reports.weforum.org/docs/WEF_GGGR_Report_2026.pdf:

«Արևելյան Ասիա և խաղաղօվկիանոսյան երկրներ», «Հարավային Ասիա», «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա»): Հայաստանն ամենամյա զեկույցներում ընդգրկված է երկրորդ ամենամյա զեկույցից սկսած և 2024-ից ընդգրկված է *«Կենտրոնական Ասիա»* խմբում:

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը համալիր (ագրեգացված) ցուցանիշ է, որի հաշվարկման համար օգտագործվում է 4 ենթաինդեքս.

1. *Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ*,
2. *Կրթության ձեռքբերում*,
3. *Առողջություն և կյանքի տևողություն*,
4. *Քաղաքական մասնակցություն*:

Գծապատկեր 1. Գենդերային անհավասարության ինդեքսի կառուցվածքը



«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսը հաշվարկվում է հինգ ցուցիչների հիման վրա՝ *«Աշխատուժի մասնակցության մակարդակ», «Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն», «Վաստակած եկամուտ», «Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն»* և *«Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն»*: Ենթաինդեքսն արտացոլում է աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց ներգրավվածության, վարձատրության, եկամուտների ստացման, ինչպես նաև

ղեկավար և մասնագիտական պաշտոններում առաջխաղացման հնարավորությունների միջև առկա անհավասարության աստիճանը (գենդերային ճեղքվածքը):

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսի հաշվարկման հիմք են ծառայում չորս ցուցիչներ՝ *«Գրագիտության մակարդակ», «Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն», «Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն»* և *«Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն»*: Ենթաինդեքսը բնութագրում է կանանց և տղամարդկանց միջև կրթության մատչելիության տարբերության աստիճանը՝ գենդերային ճեղքվածքը:

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է երկու ցուցիչ՝ *«Երկու սեռերի նորածինների թվաքանակների հարաբերակցություն»* և *«Առողջ կյանքի սպասվող տևողություն»*: Վերջինս ներկայացնում է կանանց և տղամարդկանց առողջ կյանքի միջին տևողությունների քանակական հարաբերակցությունը:

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը նախատեսված է քաղաքական որոշումների ընդունման բարձրագույն մակարդակներում կանանց և տղամարդկանց ներկայացվածության միջև առկա անհավասարության գնահատման համար: Դրա հաշվարկման համար օգտագործվում է երեք ցուցիչ՝ *«Կանայք խորհրդարանում»*, *«Կանայք կառավարությունում»* և *«Պետության ղեկավարի պաշտոնում վերջին հիսուն տարում կանանց և տղամարդկանց կողմից պաշտոնավարելու տարիների հարաբերակցություն»*:

ՀԳԱ ինդեքսը հաշվարկելիս՝ առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.

1. Երկրների դասակարգումը կատարվում է ոչ թե դրանց զարգացման մակարդակի, այլ <u>գենդերային ճեղքվածքի հիման վրա</u>:

2. Երկրների գնահատումն իրականացվում է <u>բացառապես այնպիսի ելքային ցուցանիշների միջոցով</u>, որոնք համադրելի են բոլոր երկրների համար և կախված չեն տվյալ երկրի քաղաքական, իրավական, մշակութային կամ սոցիալական առանձնահատկություններից:

3. Ինդեքսի աճը վկայում է գենդերային ճեղքվածքի կրճատման մասին: Ի դեպ, գենդերային ճեղքվածք է համարվում նաև այն իրավիճակը, երբ կանայք են տղամարդկանցից ավելի նախընտրելի պայմաններում գտնվում:

Ինդեքսի հաշվարկումն իրականացվում է չորս հաջորդական քայլերով.

Քայլ 1. Բոլոր սկզբնական տվյալները ներկայացվում են «կին/տղամարդ» թվային հարաբերակցությունների տեսքով:

Քայլ 2. Ստացված հարաբերակցություններից յուրաքանչյուրի համար սահմանվում է գենդերային հավասարության առավելագույն հնարավոր արժեքը: Գրեթե բոլոր հարաբերակցությունների համար այդ արժեքը հավասար է 1-ի: Բացառություն են կազմում միայն երկու հարաբերակցություններ. նորածինների թվաքանակների սեռային հարաբերակցության դեպքում առավելագույն արժեքը 0.944 է, իսկ առողջ կյանքի սպասվող տևողության հարաբերակցության դեպքում՝ 1.06:

Քայլ 3. Հաշվարկվում են ինդեքսի չորս ենթաինդեքսները, որոնք ներկայացնում են դրանց հիմքում ընկած ցուցիչների կշռված միջինները: Ենթաինդեքսների արժեքները պատկանում են [0;1] միջակայքին. 1-ը բնութագրում է կանանց և տղամարդկանց միջև լիարժեք հավասարությունը, իսկ 0-ն՝ լիակատար անհավասարությունը:

Քայլ 4. Հաշվարկվում է ՀԳԱ ինդեքսը՝ որպես չորս ենթաինդեքսների միջին թվաբանական [0;1] միջակայքում:

ՀԳԱ ինդեքսը շատ հաճախ ներկայացվում է տոկոսային արտահայտությամբ: Այդ դեպքում ինդեքսի արժեքը բազմապատկվում է 100-ով, և դրա հնարավոր արժեքների բազմությունը տեղափոխվում է [0;100] միջակայք: Նման ներկայացման ձևը հնարավորություն է տալիս ինդեքսը մեկնաբանել որպես տվյալ երկրում գենդերային անհավասարության հաղթահարման աստիճան: Օրինակ, եթե երկրի ՀԳԱ ինդեքսը 0.743 է, ապա դա նշանակում է, որ երկրում գենդերային անհավասարության հաղթահարման մակարդակը 74.3 տոկոս է, այսինքն՝ լիակատար գենդերային հավասարության հասնելու համար դեռևս անհրաժեշտ է կրճատել մնացած 25.7-տոկոսանոց ճեղքվածքը:

2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ[2]

Համաշխարհային տնտեսական համաժողովի 2026 թվականի զեկույցն ընդգրկում է 145 երկրների տվյալներ, իսկ 20-ամյա անփոփոխ ընտրանքը ներառում է 97 երկիր (որոնց համար ինդեքսը հաշվարկվել է 2006-2026թթ. անընդմեջ):

[2] Նախորդ տարիների որոշ տվյալներ Զեկույցում վերանայվել են: Սույն բաժնում համեմատությունների համար օգտագործված են թարմացված՝ զեկույցի ինտերնետային էջում զետեղված տվյալների բազայի (և ոչ թե 2025թ. զեկույցի) տվյալները:

2.1. Համաշխարհային միտումներն ու արդյունքները

2026 թվականին համաշխարհային գենդերային ճեղքվածքը փակված է 69.2%-ով (145 երկրների համար), իսկ 20-ամյա անփոփոխ ընտրանքի (97 երկրների) համար ցուցանիշը հասել է պատմական առավելագույնին՝ 69.4%: Նախորդ՝ 2025 թվականի համեմատ (68.8%) արձանագրվել է համաշխարհային ինդեքսի 0.4 տոկոսային կետով աճ:

Անցած 20 տարիների (2006-2026թթ.) կտրվածքով համաշխարհային գենդերային ճեղքվածքը կրճատվել է ընդամենը 5.2 տոկոսային կետով (2006թ. 64.2%-ից հասնելով 69.4%-ի):

Նշվում է, որ առաջընթացի ներկայիս դանդաղ տեմպերի պահպանման պարագայում համաշխարհային մակարդակով լիակատար գենդերային հավասարության հասնելու համար աշխարհից կպահանջվի ևս 120 տարի:

Ըստ գենդերային անհավասարության ինդեքսի կազմված համաշխարհային վարկանիշային աղյուսակը 2026թ. ևս, 17 տարի անընդմեջ, գլխավորում է Իսլանդիան՝ 93.0% արդյունքով (միակ երկիրն է, որը հաղթահարել է 90%-ի շեմը): Առաջատար եռյակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել. 2-րդ հորիզոնականը (ՀԳԱ 0.872 ինդեքսով) զբաղեցնում է Ֆինլանդիան, 3-րդը Նորվեգիան է՝ 0.857 ինդեքսով: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաև Նամիբիան (4-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.845), Մեծ Բրիտանիան (5-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.842), Նոր Զելանդիան (6-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.828), Շվեդիան (7-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.823), Ավստրալիան (8-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.819), Գերմանիան (9-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.817) և Իռլանդիան (10-րդ հորիզոնական, ՀԳԱ ինդեքս՝ 0.814): Ավստրալիան առաջատար տասնյակում «նորեկ» է:

Վարկանիշային աղյուսակի հետնապահներն են Պակիստանը (143-րդ հորիզոնական, 0.595 միավոր), Իրանը (144-րդ հորիզոնական, 0.585 միավոր) և Չադը (145-րդ հորիզոնական, 0.578 միավոր):

Ըստ ՀԳԱ ինդեքսի 4 ենթաինդեքսների՝ արձանագրվել են հետևյալ գլոբալ արդյունքները.

- ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքս

Գլոբալ ճեղքվածքը փակված է 96.9%-ով (2025թ. համեմատ աճել է 1.8 տոկոսային կետով, իսկ 2006թ. ի վեր՝ 5.5 տոկոսային կետով): Այս ենթաինդեքսով լիակատար հավասարության հասնելու համար կպահանջվի ընդամենը 8 տարի:

- ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքս

Գլոբալ ճեղքվածքը փակված է 96.2%-ով: Սա միակ ենթաինդեքսն է, որի արժեքը նույնն է, ինչ 2006-ին:

- ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքս

Այս ենթաինդեքսի գծով գլոբալ ճեղքվածքը փակված է ընդամենը 61.7%-ով: Տնտեսական ոլորտում լիակատար գենդերային հավասարության հասնելու համար կպահանջվի ևս 129 տարի:

- ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքս

Սա ամենացածր ցուցանիշով ենթաինդեքսն է՝ փակված է ճեղքվածքի ընդամենը 22.1%-ը: 2025թ. (22.5%) համեմատ արձանագրվել է 0.4 տոկոսային կետի նահանջ, ինչը ցույց է տալիս, որ քաղաքական որոշումների կայացման բարձրագույն օղակներում կանանց ներգրավվածությունը մնում է ցածր մակարդակի վրա:

2.2. Գենդերային անհավասարությունն աշխարհի տարբեր հատվածներում

Ինչպես նշվեց, Զեկույցում աշխարհի 145 երկրները խմբավորված են 8 տարածաշրջանային խմբերում: Տարածաշրջանների միջև արձանագրվել են գենդերային հավասարության հասնելու ժամկետների և առաջընթացի տեմպերի բավական էական տարբերություններ:

1. Եվրոպա (75.7%) – ամենամեծ տարածաշրջանային խումբն է՝ ներառում է 40 երկիր: Վերականգնել է ՀԳԱ ինդեքսի գծով առաջատար տարածաշրջանի տիտղոսն ի հաշիվ նրա, որ ինդեքսը 2025թ. համեմատ աճել է 0.6 տոկոսային կետով, իսկ 2006թ. ի վեր՝ 7.0 տոկոսային կետով: Լիակատար գենդերային հավասարության հասնելու ժամկետը 70 տարի է: Տարածաշրջանը համաշխարհային առաջատարն է քաղաքական մասնակցության ենթաինդեքսի առումով (37.0%): Կրթության (99.5%) և առողջապահության (96.9%) ոլորտներում պահպանվում են բարձր ցուցանիշներ, իսկ տնտեսական մասնակցության ճեղքվածքը փակված է 69.5%-ով: Տարածաշրջանի 7 երկիր գտնվում է համաշխարհային վարկանիշային աղյուսակի լավագույն տասնյակում, և միայն մի երկիր՝ Թուրքիան ընդգրկված չէ առաջին հարյուրյակում: Ի դեպ, տարածաշրջանը գենդերային հավասարության առումով ամենաանհամասեռն է՝ առաջատար Իսլանդիայի և հետնապահ Թուրքիայի ՀԳԱ ինդեքսների տարբերությունը 28.1 տոկոսային կետ է (93.0%-64.9%):

2. Հյուսիսային Ամերիկա (75.2%) – այս տարածաշրջանում ընդգրկված է ընդամենը երկու երկիր՝ ԱՄՆ-ն և Կանադան: Տարածաշրջանը համաշխարհային առաջատարն է տնտեսական մասնակցության (77.1%) և կրթական ձեռքբերումների (100.0%) ենթաինդեքսներով: Իսկ քաղաքական մասնակցության ոլորտում արձանագրվել է 3.3 տոկոսային կետի նահանջ (հասնելով 26.4%-ի)՝ կառավարությունում և խորհրդարանում կանանց ներկայացվածության նվազման պատճառով: Լիակատար գենդերային հավասարության հասնելու ժամկետը 108 տարի է:

3. Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան (74.5%) - տարածաշրջանն առաջատարն է առողջապահության ենթաինդեքսով (97.7%) և ունի 2-րդ բարձր ցուցանիշը քաղաքական մասնակցության ոլորտում (34.2%): ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսը 99.6% է, իսկ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսը՝ 66.4%: Տարածաշրջանի բոլոր 22 երկրները գտնվում են վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում: Ի դեպ, այս տարածաշրջանը գրանցել է աշխարհում ամենամեծ 20-ամյա առաջընթացը (+8.6 տոկոսային կետ): Գենդերային հավասարության հասնելու ժամկետն աշխարհում ամենակարճն է՝ 60 տարի:

4. Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան երկրներ (70.3%) – 19 երկիր ընդգրկող այս տարածաշրջանն առաջին անգամ հատել է 70%-ի շեմը: Տարածաշրջանի 10 երկիր ընդգրկված է համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում, դրանցից երկուսը գտնվում են առաջատար տասնյակում: Տնտեսական մասնակցության ենթաինդեքսով (71.4%) տարածաշրջանը 2-րդն է աշխարհում, իսկ կրթության ոլորտում գենդերային հավասարության հասել է 98.5%-ով: Քաղաքական մասնակցության ցուցանիշը ցածր է (15.5%), իսկ ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի արժեքը 95.6% է: Տարածաշրջանում լիակատար գենդերային հավասարության հասնելու համար կպահանջվի 144 տարի:

5. Կենտրոնական Ասիա (70.0%) - ունի լիակատար գենդերային հավասարության հասնելու ամենաերկար կանխատեսվող ժամկետն աշխարհում՝ 202 տարի: Տարածաշրջանի 7 երկրներից 5-ն ընդգրկված են համաշխարհային առաջին հարյուրյակում, իսկ երկրների ինդեքսների միջև տարբերությունը չի գերազանցում 10 տոկոսային կետը: Չնայած Կենտրոնական Ասիան ունի բավական բարձր ցուցանիշներ կրթության (99.3%), առողջապահության (97.3%) և տնտեսական մասնակցության (71.0%) ոլորտներում, տարածաշրջանի ընդհանուր առաջընթացն էականորեն զսպվում է քաղաքական մասնակցության ենթաինդեքսի ցածր մակարդակի պատճառով (ընդամենը 12.6%): Հայաստանն ընդգրկված է այս տարածաշրջանային խմբում:

6. Ենթասահարական Աֆրիկա (68.8%) - տարածաշրջանը ներառում է 34 երկիր, որոնցից 19-ը վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրակում են (իսկ

դրանցից մեկը՝ առաջատար տասնյակում): Բարելավման 20-ամյա միջին տարեկան տեմպի պահպանման դեպքում տարածաշրջանի լիակատար գենդերային հավասարության հասնելու համար կպահանջվի 102 տարի: Տարածաշրջանն աչքի է ընկնում երկրների միջև ամենամեծ անհամասեռությամբ. Նամիբիան 84.5% ցուցանիշով 4-րդն է աշխարհում, մինչդեռ Չադը եզրափակում է համաշխարհային ցանկը (57.8%): Տարածաշրջանի կրթական ձեռքբերումների ցուցանիշն աշխարհում ամենացածրն է՝ 89.5%:

7. Հարավային Ասիա (64.5%) – 7 երկիր ներառող այս տարածաշրջանն ունի տնտեսական մասնակցության ամենացածր ցուցանիշն աշխարհում (ընդամենը 40.9%): Տարածաշրջանի միայն մեկ երկիր է գտնվում վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում: Այս տարածաշրջանի ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսն արձանագրել է ամենամեծ 20-ամյա աճը (+15.0 տոկոսային կետ՝ հասնելով 95.9%-ի), մինչդեռ, քաղաքական մասնակցության ոլորտում առաջընթացն ամենադանդաղն է (+3.5 տոկոսային կետ՝ հասնելով 25.4%-ի): Լիակատար գենդերային հավասարության հասնելու ժամկետը 149 տարի է:

8. Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա (62.5%) - 14 երկիր ներառող այս տարածաշրջանից ընդամենը երկու երկիր է գտնվում վարկանիշային աղյուսակի առաջին հարյուրյակում: Գենդերային հավասարության հասնելու ժամկետը 182 տարի է: Տարածաշրջանը քաղաքական մասնակցության գծով ունի աշխարհում ամենացածր ցուցանիշը (ընդամենը 11.5%), իսկ տնտեսական մասնակցության ճեղքվածքը փակված է ընդամենը 44.8%-ով:

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաձայն 2026 թվականի զեկույցի՝ Հայաստանը գենդերային անհավասարության 0.731 (73.1%) ինդեքսով 145 երկրների շարքում զբաղեցնում է 58-րդ հորիզոնականը: Նախորդ՝ 2025 թվականի համեմատ Հայաստանի ՀԳԱ ինդեքսն անփոփոխ է մնացել, իսկ վարկանիշային դիրքը բարելավվել է 1 հորիզոնականով: (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Գենդերային անհավասարության ինդեքսը Հայաստանում և ՀՀ դիրքը՝ ըստ ինդեքսի, 2007-2026թթ.[3,4]



Գծապատկերից երևում է, որ 2007-ից ի վեր Հայաստանի ՀԳԱ ինդեքսն աճել է 6.6 տոկոսային կետով: Ի դեպ, ինդեքսը 2015-ից ի վեր նվազել է միայն 2021-ին՝ 1.1 տոկոսային կետով, իսկ 2024-ին և 2026-ին արձանագրվել է աճի դադար:

Գծապատկեր 3-ից երևում է, որ **Հայաստանի ՀԳԱ-ն 3.9 տոկոսային կետով գերազանցում է համաշխարհային միջինը** (69.2%): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ **այդ տարբերությունը տարեցտարի կրճատվում է:**

[3] Նախկինում՝ տվյալ տարում հրապարակվող զեկույցը հիմնվում էր նախորդ տարվա տվյալների վրա: Այս տարվա զեկույցի տվյալները վերաբերում են հենց այս տարվան: Համապատասխանաբար, փոխվել է նաև զեկույցի ինտերնետային էջում զետեղված տվյալների բազայի բովանդակությունը: Այս և հետագա գծապատկերներում ու աղյուսակներում ներկայացված են տվյալների բազայում համապատասխան տարվան վերաբերող տվյալները:

[4] Գծապատկերում 2019թ. տվյալները բացակայում են, քանի որ 2019-ի դեկտեմբերին լույս տեսած 14-րդ զեկույցը պաշտոնապես անվանվել է «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց-2020», մինչդեռ նախորդ՝ 2018թ. հրապարակված 13-րդ զեկույցը կոչվում էր «Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույց-2018»: Փաստացի՝ 21 տարվա ընթացքում հրապարակվել է 20 զեկույց:

Գծապատկեր 3. ՀՀ գենդերային անհավասարության ինդեքսը, ենթաինդեքսները և աշխարհի միջին գնահատականները, 2026թ.



Հայաստանի բոլոր չորս ենթաինդեքսները բարձր են դրանց համաշխարհային միջին մակարդակներից: Ըստ ենթաինդեքսների՝ Հայաստանը գենդերային անհավասարությունը հաղթահարել է.

- ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսի գծով՝ 65.2%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը 61.7% է):
- ***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսի գծով՝ 98.2%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը 96.9% է):
- ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի գծով՝ 96.5%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը՝ 96.2%):
- ***«Քաղաքական մասնակցություն»*** ենթաինդեքսի գծով՝ 32.4%-ով (ենթաինդեքսի համաշխարհային միջինը՝ 22.1%):

Աղյուսակ 1-ում ներկայացված է առավել ընդգրկուն տեղեկատվություն Հայաստանում նախորդ տարվա համեմատ գենդերային անհավասարության հաղթահարման գործընթացի վերաբերյալ:

Աղյուսակ 1. Հայաստանի գենդերային անհավասարության ենթաինդեքսները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները, 2025-2026թթ.*)

Ենթաինդեքս • *Ցուցիչ*	Տարի	Դիրք	ՀՀ ինդեքս	Համաշխարհ. միջին	Կին	Տղամարդ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**2025**	**91**	**66.8%**	**61.0%**		
	2026	**110**	**65.2%**	**61.7%**		
• *Աշխատուժի մասնակցության մակարդակ*	2025	89	74.9%		56.9%	75.9%
	2026	92	74.9%		56.9%	75.9%
• *Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 1-7 (լավագույն)*	2025	49	69.4%			
	2026	57	67.0%			
• *Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար*	2025	106	55.5%		14,010	25,260
	2026	119	51.9%		14,040	27,060
• *Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն*	2025	91	40.3%		28.7%	71.3%
	2026	96	40.3%		28.7%	71.3%
• *Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն*	2025	1	100%		35.8%	64.2%
	2026	1	100%		35.8%	64.2%
Կրթության ձեռքբերում	**2025**	**99**	**98.0%**	**95.1%**		
	2026	**99**	**98.2%**	**96.9%**		
• *Գրագիտության մակարդակ*	2025	1	100%		99.7%	99.9%
	2026	1	100%		99.8%	99.9%
• *Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն*	2025	117	96.9%		94.9%	98.0%
	2026	120	96.9%		94.9%	98.0%
• *Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն*	2025	114	97.5%		88.2%	90.5%
	2026	110	98.3%		90.1%	91.7%
• *Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն*	2025	1	100%		48.8%	63.8%
	2026	1	100%		44.3%	61.3%
Առողջություն և կյանքի տևողություն	**2025**	**122**	**96.1%**	**96.2%**		
	2026	**95**	**96.5%**	**96.2%**		
• *Նորածինների հարաբերակցություն՝ ըստ սեռի*	2025	145	91.7%			
	2026	142	92.3%			
• *Առողջ կյանքի տևողության տարիներ*	2025	1	106.0%			
	2026	1	106.0%			
Քաղաքական մասնակցություն	**2025**	**48**	**31.6%**	**22.9%**		
	2026	**42**	**32.4%**	**22.1%**		
• *Կանայք խորհրդարանում*	2025	32	62.1%		38.3%	61.7%
	2026	27	64.6%		39.3%	60.7%
• *Կանայք կառավարությունում*	2025	38	50.0%		33.3%	66.7%
	2026	31	50.0%		33.3%	66.7%
• *Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)*	2025	81	0.0%		0	50
	2026	82	0.0%		0	50

**) Ցուցանիշի արժեքը նշված է կանաչով, եթե 2026 թվականին 2025-ի համեմատ գրանցվել է բարելավում, կարմիրով՝ վատթարացման դեպքում, և դեղինով, եթե այն մնացել է անփոփոխ:*

Աղյուսակից երևում է, որ **2026-ին, ինչպես և նախորդ տարի, առավել կարևոր ցուցանիշների մասով վատթարացում է արձանագրվել:**

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» **ենթաինդեքսի գծով այս տարի ևս (ինչպես և նախորդ տարի) արձանագրվել է բավական լուրջ նահանջ. նախորդ տարվա համեմատ ենթաինդեքսը նվազել է 1.6 տոկոսային կետով, իսկ դրա գծով վարկանիշային դիրքը վատթարացել է 19 հորիզոնականով և Հայաստանը դուրս է մնացել նույնիսկ առաջին հարյուրյակից՝ զբաղեցնելով 110-րդ հորիզոնականը: Նախորդ տարվա համեմատ վատթարացումը հատկապես շոշափելի է *«Վաստակած եկամուտ»* և *«Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն»* ցուցիչների գծով՝ համապատասխանաբար 3.6 տոկոսային կետով (վարկանիշային դիրքի նահանջը՝ 13 հորիզոնական) և 2.4 տոկոսային կետով (վարկանիշային դիրքի նահանջը՝ 8 հորիզոնական): Ի դեպ, վերոհիշյալ երկու ցուցիչներից առաջինը նվազում է երրորդ տարին անընդմեջ և 2026-ի արժեքը 2023-ինից ցածր է 10.8 տոկոսային կետով, իսկ վարկանիշային դիրքը վատթարացել է 36 հորիզոնականով: Երկրորդ ցուցիչը նվազում է չորս տարի շարունակ. 2022-ի համեմատ ցուցիչի արժեքը 8.9 տոկոսային կետով ցածր է, իսկ վարկանիշային դիրքը վատթարացել է 42 հորիզոնականով:**

Հիշեցնենք, որ երրորդ տարին է, ինչ *«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* ենթաինդեքսը շարունակաբար նվազում է. ընդհանուր անկումը կազմում է 6.4 տոկոսային կետ՝ 2023թ. 71.6%-ից նվազելով մինչև 65.2%, իսկ վարկանիշային դիրքի վատթարացումը 58 հորիզոնական է: Սա վկայում է Հայաստանի աշխատաշուկայում խորացող գենդերային խտրականության և այս ուղղությամբ կառավարության քաղաքականության անարդյունավետության մասին:

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը նախորդ տարվա միանգամից 1.1 տոկոսային կետով նվազումից հետո փոքր-ինչ՝ 0.2 տոկոսային կետով, բարելավվել է և կազմել 98.2%: Աճն ապահովվել է շնորհիվ միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածության ցուցիչի՝ այն 2025-ի 97.5%-ից 2026-ին դարձել է 98.3%: **Այնուամենայնիվ, ենթաինդեքսի աճը չի բավականացրել, որպեսզի դրա գծով վարկանիշային դիրքի առումով ևս առաջընթաց գրանցվի. վարկանիշային դիրքը մնացել է անփոփոխ՝ 99-րդ հորիզոնական: Ի դեպ, ենթաինդեքսի 2026թ. արժեքը բոլոր տարիների արժեքներից փոքր չէ միայն 2025-ի արժեքից: Իսկ մինչև այդ այս ենթաինդեքսը մշտապես շատ բարձր է եղել (7 անգամ 100-տոկոսանոց արդյունք, ևս 7 տարիներին՝ 99.9%, երկու անգամ՝ 99.8% և միայն 2024-ին՝ 99.1%): Այս հանգամանքը վկայում է, որ կրթության ոլորտում ևս առկա են պետական քաղաքականության ձախողումներ:**

Հատկանշական է, որ չափազանց մեծ անհամապատասխանություն կա կանանց կրթական/մասնագիտական ներուժի և դրա տնտեսական իրացման

(ռեալիզացիայի) միջև: Երկու կարևորագույն ցուցիչների՝ «բարձրագույն կրթության համակարգում ընդգրկվածություն» (***«Կրթության ձեռքբերում»*** ենթաինդեքսի ցուցիչ) և «մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն» (***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** ենթաինդեքսի ցուցիչ) գծով Հայաստանը զբաղեցնում է առաջին հորիզոնականն աշխարհում: **Մինչդեռ եկամուտների բաշխման և ղեկավարման օղակներում կանանց ներգրավվածության առումով պատկերը չափազանց մտահոգիչ է: «Վաստակած եկամուտ» ցուցիչով Հայաստանը 119-րդն է աշխարհում (կանանց տարեկան եկամուտը 14,040 PPP դոլար է, մինչդեռ տղամարդկանցը գրեթե կրկնակի ավելի է՝ 27,060 PPP դոլար): Համաձայն «օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն» ցուցիչի՝ բարձրաստիճան և ղեկավար պաշտոնների ընդամենը 28.7%-ն են կանայք զբաղեցնում, այն էլ՝ հիմնականում շնորհիվ խորհրդարանի պատգամավորների համար օրենսդրորեն ամրագրված սեռային քվոտավորման:** Սա վկայում է, այսպես կոչված, «ապակյա առաստաղի» (glass ceiling) խնդրի առկայության մասին. բարձրագույն կրթություն և մասնագիտական որակավորում ունեցող կանայք բախվում են անտեսանելի ու անհաղթահարելի կառուցվածքային և համակարգային խոչընդոտների, որոնք խանգարում են նրանց ծառայողական առաջխաղացմանը՝ չնայած նրանց բարձրակարգ կրթությանը, որակավորմանը և մասնագիտական պատրաստվածությանը: Իսկ դա, բնականաբար, երկրի մասշտաբով խորացնում է մարդկային կապիտալի թերօգտագործման խնդիրը:

2026-ին ***«Առողջություն և կյանքի տևողություն»*** ենթաինդեքսի գծով առկա է որոշակի բարելավում. այն կազմել է 96.5%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.4 տոկոսային կետով: Այս տարի ևս բարելավումը պայմանավորված է *«Նորածինների հարաբերակցություն՝ ըստ սեռի»* ցուցիչի աճով՝ 0.6 տոկոսային կետով: **Ի դեպ, այս ցուցիչով Հայաստանը շարունակում է մնալ ամենավատերից մեկն աշխարհում՝ 142-րդը 145 երկրների շարքում: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը լուրջ մարտահրավեր է հանդիսանում:**

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը նախորդ տարվա համեմատ աճել է 0.8 տոկոսային կետով: **Առաջընթացը պայմանավորված է նրանով, որ խորհրդարանում մեկով ավելացել է կին պատգամավորների թիվը:**

Այսպիսով, վերլուծությունը ցույց է տալիս, որ ***«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»*** **ենթաինդեքսի գծով արձանագրված բավական լուրջ նահանջի պայմաններում ՀԳԱ ինդեքսը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ այն պատճառով, որ աճել են մյուս երեք (ոչ տնտեսական բնույթի)**

ենթաինդեքսները՝ հատկապես *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զեկույցում Հայաստանն ընդգրկված է «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանային խմբում: 2026թ. տվյալներով՝ Հայաստանը շարունակում է գլխավորել տարածաշրջանային վարկանիշային աղյուսակը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 2. ՀԳԱ ինդեքսը «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանում, 2025-2026թթ.*)

Երկիր	2025 թվական			2026 թվական		
	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %	Դիրքը տարածաշրջանում	Դիրքն աշխարհում	Ինդեքս, %
Հայաստան	***1***	***59***	***73.1***	***1***	***58***	***73.1***
Վրաստան	2	63	72.9	2	60	72.7
Ղրղզստան	4	95	69.6	3	88	70.4
Ղազախստան	3	92	69.8	4	95	70.0
Ադրբեջան	5	100	68.8	5	98	69.7
Ուզբեկստան	6	110	67.8	6	110	68.2
Տաջիկստան	7	129	64.6	7	136	63.8

**) Ցուցանիշի արժեքը նշված է կանաչով, եթե 2026 թվականին 2025-ի համեմատ գրանցվել է բարելավում, կարմիրով՝ վատթարացման դեպքում, և դեղինով, եթե այն մնացել է անփոփոխ:*

Նախկինում Հայաստանի խմբում ներառված էին Մոլդովան և Բելառուսը, որոնք ինդեքսի առումով ավանդաբար գերազանցել են Հայաստանին: **2024 թվականից այդ երկրներն ընդգրկված են այլ տարածաշրջանային խմբում, և դրանով պայմանավորված Հայաստանը երեք տարի անընդմեջ դարձել է տարածաշրջանային վարկանիշային աղյուսակի առաջատարը:**

Զեկույցում ներառված են Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ չորս երկիր[5], որոնց թվում Հայաստանը ՀԳԱ ինդեքսով և աշխարհում զբաղեցրած դիրքով զիջում է միայն 74.0% ՀԳԱ ինդեքս ունեցող և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 52-րդ հորիզոնականը զբաղեցնող

[5] Ռուսաստանի Դաշնությունը Զեկույցում ներառված չէ:

Բելառուսին: **Ի դեպ, ԵԱՏՄ երկրներից միայն Հայաստանի ՀԳԱ ինդեքսը նախորդ տարվա համեմատ չի աճել:**

Հայաստանում և սահմանակից երկրներում գենդերային անհավասարության ինդեքսի և ենթաինդեքսների վերաբերյալ համեմատական տվյալները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. ՀԳԱ ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում, 2026թ.

Ցուցանիշ	Երկիր	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Թուրքիա	Իրան
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	**Ինդեքս, %**	**73.1**	**72.7**	**69.7**	**64.9**	**58.5**
	Դիրք	**58**	**60**	**98**	**126**	**144**
• Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս, %	65.2	71.9	77.3	52.5	35.1
	Դիրք	110	60	22	130	145
• Կրթության ձեռքբերում	Ինդեքս, %	98.2	98.6	99.3	98.7	98.4
	Դիրք	99	94	73	93	96
• Առողջություն և կյանքի տևողություն	Ինդեքս, %	96.5	97.5	93.9	96.8	96.1
	Դիրք	95	37	145	81	117
• Քաղաքական մասնակցություն	Ինդեքս, %	32.4	22.6	8.1	11.8	4.6
	Դիրք	42	70	127	117	139

Աղյուսակից երևում է, որ գենդերային անհավասարության ինդեքսով Հայաստանը 2026-ին ևս գերազանցում է բոլոր սահմանակից (հարևան) երկրներին: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ **ՀԳԱ ինդեքսի չորս ենթաինդեքսներից Հայաստանն առաջատար է միայն մեկի՝ *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի գծով: Այսինքն՝ ՀԳԱ ինդեքսի գծով հարևանների համեմատ Հայաստանի գերակա վարկանիշային դիրքը հիմնականում ապահովվել է քաղաքական մասնակցության ենթաինդեքսի՝ օրենսդրորեն ամրագրված քվոտավորման շնորհիվ:**

Հայաստանի չորս հարևաններից ամենամեծ ՀԳԱ ինդեքսը՝ 72.7%, ունի համաշխարհային վարկանիշային աղյուսակում 60-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանը: Երկրորդն 98-րդ հորիզոնականը զբաղեցնող Ադրբեջանն է՝ 69.7% ինդեքսով: Հաջորդը 126-րդ հորիզոնականում գտնվող Թուրքիան է՝ 64.9% ինդեքսով: Վերջինն Իրանն է (58.5%, 144-րդ հորիզոնական):

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի գծով Հայաստանն իր երկու հարավկովկասյան հարևաններին էլ (Ադրբեջանին և Վրաստանին) զիջում է (համապատասխանաբար 12.1 և 6.7 տոկոսային կետով):

«Կրթության ձեռքբերում» **ենթաինդեքսի գծով վերջին ժամանակահատվածում արձանագրված անկման պատճառով Հայաստանը զիջում է իր բոլոր չորս հարևաններին:**

«Առողջություն և կյանքի տևողություն» ենթաինդեքսով Հայաստանից բարձր վարկանիշ ունեն Վրաստանը և Թուրքիան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով նշենք.

- **Հայաստանի գենդերային անհավասարության ինդեքսը 73.1% է և նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Ինդեքսի համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 58-րդն է:**

  Ինդեքսի *«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ»* ենթաինդեքսի գծով այս տարի ևս Հայաստանը բավական լուրջ նահանջ է ունեցել՝ նախորդ տարվա համեմատ ենթաինդեքսը նվազել է 1.6 տոկոսային կետով, իսկ դրա գծով վարկանիշային դիրքը վատթարացել է 19 հորիզոնականով: Ընդ որում, այս ենթաինդեքսի գծով վատթարացումը վերջին տարիներին դարձել է «տխուր ավանդույթ»: Այն արդեն երեք տարի շարունակ նվազում է. այդ ընթացքում ենթաինդեքսի գծով ընդհանուր անկումը կազմում է 6.4 տոկոսային կետ, իսկ վարկանիշային դիրքի վատթարացումը 58 հորիզոնական է: Դա վկայում է տնտեսությունում խորացող գենդերային խտրականության և այս ուղղությամբ կառավարության անգործության կամ քաղաքականության անարդյունավետության մասին:

  «Կրթության ձեռքբերում» **ենթաինդեքսի 2026թ. արժեքը 0.2 տոկոսային կետով գերազանցում է 2025-ին նախորդ տարվա համեմատ նվազած արժեքին: Նախորդ տարիներին այս ենթաինդեքսը մշտապես բարձր է եղել:**

  Զեկույցի տվյալները վկայում են, որ Հայաստանում կանանց կրթական/մասնագիտական ներուժի և դրա տնտեսական իրացման (ռեալիզացիայի) միջև խզումը չափազանց մեծ է: Կանանց կրթական/մասնագիտական ներուժի առումով Հայաստանն առաջատար երկրների թվում է: Մասնավորապես, «բարձրագույն կրթության համակարգում ընդգրկվածություն» և «մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն» ցուցիչների գծով մեր երկիրը զբաղեցնում է առաջին հորիզոնականն աշխարհում: **Մինչդեռ եկամուտների բաշխման և ղեկավարման օղակներում կանանց ներգրավվածության առումով պատկերը չափազանց մտահոգիչ է: «Վաստակած եկամուտ» ցուցիչով**

Հայաստանը նույնիսկ հարյուրյակում չէ՝ 119-րդն է աշխարհում (տղամարդկանց տարեկան եկամուտը գրեթե կրկնակի գերազանցում է կանանց եկամուտին): Իսկ «օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն» ցուցիչի համաձայն՝ կանայք զբաղեցնում են բարձրաստիճան և ղեկավար պաշտոնների ընդամենը 28.7%ը, այն էլ, ինչպես հայտնի է, զգալի չափով շնորհիվ խորհրդարանի պատգամավորության թեկնածուների սեռային հարաբերակցության օրենսդրորեն ամրագրված քվոտավորման:

Նույնիսկ «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի գծով արձանագրված բավական լուրջ նահանջի պայմաններում ՀԳԱ ինդեքսը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ: Իսկ դա զուտ այն պատճառով է, որ աճել են մյուս երեք ոչ տնտեսական բնույթի ենթաինդեքսները, դրանց թվում՝ հատկապես «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը:

- Հայաստանը «Կենտրոնական Ասիա» տարածաշրջանի վարկանիշային աղյուսակի առաջատարն է:

- Զեկույցում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ չորս երկրների թվում Հայաստանը երկրորդն է՝ զիջելով միայն Բելառուսին: **Ի դեպ, ԵԱՏՄ երկրներից միայն Հայաստանի ՀԳԱ ինդեքսը նախորդ տարվա համեմատ չի աճել:**

- Գենդերային անհավասարության ինդեքսով Հայաստանը գերազանցում է բոլոր սահմանակից երկրներին, սակայն **ՀԳԱ ինդեքսի չորս ենթաինդեքսներից միայն մեկի՝ *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի գծով է առաջատար: Այսինքն՝ համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի գծով հարևանների համեմատ Հայաստանի առաջատար վարկանիշային դիրքը հիմնականում պայմանավորված է *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսով, որի բարձր լինելը զգալի չափով բացատրվում է վերը հիշատակված «սեռային քվոտավորմամբ»:**

***«Կրթության ձեռքբերում»* ենթաինդեքսի գծով Հայաստանը 2026 թվականի զեկույցով զիջում է իր բոլոր չորս հարևաններին: Մինչդեռ, մինչև 2023 թվականը ներառյալ, Հայաստանն այս ենթաինդեքսով չէր զիջում հարևաններից ոչ մեկին: Ի դեպ, նախկինում Հայաստանում բազմիցս արձանագրվել է առավելագույն՝ 100%-անոց ցուցանիշ:**

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» **ենթաինդեքսով Հայաստանը հարևաններից զիջում է Ադրբեջանին և Վրաստանին** (համապատասխանաբար 12.1 և 6.7 տոկոսային կետով):

- 2026 թվականին համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը 69.2% է, որը նախորդ տարվա ցուցանիշից 0.4 տոկոսային կետով ավելի է: Զեկույցում նշված է, որ առաջընթացի ներկայիս դանդաղ տեմպերի պահպանման պարագայում համաշխարհային մակարդակով լիակատար գենդերային հավասարության հասնելու համար աշխարհից կպահանջվի ևս 120 տարի:

- Գենդերային անհավասարության ինդեքսի համաշխարհային վարկանիշային աղյուսակը 17 տարի անընդմեջ գլխավորում է Իսլանդիան, որի ինդեքսը 2026-ին կազմել է 93.0%: Վարկանիշային աղյուսակի ստորին՝ 145-րդ հորիզոնականում Չադն է՝ 57.8% ինդեքսով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: